

պէտս տեղւոյ՝ ծախեր¹ յիմոցն: 106 Բայց բերեալքն իմ յԱղուանից եւ ի Վրաց եւ ի Սիւնեաց եւ յԱրշարունեաց, եւ որ ի դոցունց իսկ ի քո տեառն եղբարորդեացդ՝ ամենայն իւրաքանչիւր ուրուք տուրն որոշողութեամբ մնաց ի տեղւոջն գրով. եւ զիս հանին մերկ եւ թշնամանաւք յամենայն արարելոց իմոց, զոր ի մանկութենէ արարեալ էի²: 107 Չի անգամ եւ զհոռոմ³ գրեանդ ոչ ետուն զկնի իմ. որք կան այդո ընկեցեալ ի կերակուր ցեցոյ⁴. բայց արդեաւք կարդացեալ լուսաւորիցի⁵ն ի դոցանէ բնակեալդ ի տեղւոջդ, եւ կամ զայս լուսաւորիցե՞ն⁵:

108 ⁶Եւ դու, տեր, զայս եւ մի ինչ ոչ գիտացեր, բայց գիտել արժան էր. քանզի լուայ, եթէ ասեին զկնի իմ, եթէ չգոյր ինչ ի տեղւոջն: 109 Չի ամենայն կահիւ կազմածով եթէ սակաւ մի երեւէի նուազեալ քան զայնոսիկ, որք յերկերիւր ամէ շինեալ վանորայքն՝ չհամարէի զանձնս արժանի կալոյ: 110 Չի թեպէտ եւ միանգամ⁷ եւ երկիցս ջարդեցաւ բոլոր կահն յանհաստատութենէ շինուածոյն, այլ զվերջինսն թէ ⁸գիտացեալ էր տեառնդ, եւ պահանջեալ յինէն համարս, դեմ յանդիման գերեւելիս գոլ առաջի քո ընտրութեան, գովութեան եւ կամ պարսաւանաց էի արժանի: 111 Բայց ես ընդ աւձտելոյն եւեթ այսր անդր.....⁹:

112 Չի տրտում եմ անմխիթար մինչեւ ի մահ, որ նման զայլոց յարձակեցան յարարս իմ եւ զիշատեցին յանխնայ, տեսեալ զիս՝ եթէ մերժեցայ¹⁰ յաչաց քոց: 113 Եւ արդ իմով ընչիւք շրջին պճնեալք, ծաղր առնելով զիս: 114 Այլ որ ինչ ի տեղւոջդ մնաց իմ՝ ուրախ եմ եւ ցնծամ, զի ի սուրբ¹¹ եւ ի հոգեւոր տեղւոջ մնաց:

115 Դարձեալ այլ շոգմոզ¹² բանիւք զայրացուցանել զքեզ, տեր, ընդ իս փութային, թէ «Մանուկ մի՝ հոգաբարձ տեղւոյն չկարէ առնել»: 116 Եւ ինձ հրեշտակ ոք ոչ մարմնացաւ, որ թերեւս ըստ հոգեղէն բնութեանն տեսեալ զառ ի ծածուկ ձգեալ զորոգայթ թշնամեացն՝ մարթեր զգուշանալ եւ ¹³յանձն

1 2. նախ՝ ծախեր, յետոյ ուղղած՝ ծախիւր

2 Գտ. արարեալ էր

3 Վ. հոռոմ

4 Վ. ցեցոյ

5 2SS. լուսաւորեցցին

6 Վ. չիք եւ դու, տեր, զայս եւ մի ինչ... եւ ծախողաց եւ մթերից տեղւոյն (*Թողթ*, 120)

7 ԲԳտ. թեպէտ միանգամ

8 ԲԳտ. գիտեցեալ էր... համար

9 ԲԳտ. այսր անդր-ից յետոյ ունի ծնթ. «Աստէն թուի թուղթ անկեալ»:

10 2Ատ. թէ մերժեցայ

11 2. զի սուրբ. Ատ. զճի սուրբ. այսպէս ըստ ԲԳտ.

12 2. շոքմոք

13 SS. յանձն առնոյր լինել ինձ երկրորդ մարդ, զոր եւ առնէի: Անդէն եւ անդ հասեալ...